զերացն, և ծանուցանել նմա զբանս Պուղտանայ՝ թէ այսպէս արարեալ են եւ զգնալ պատրիկին։ Եւ նա զկնի նորա նաւ մի ուղարկեալ փոյթ ընդ փոյթ հանդերձ նամակաւ առ նաւապետն, զի հասանել թղթոյն առ նա՝ անյապաղ դարձուսցէ զնաւն որպէս որ գնացեալն է, որ և եղեն իսկ. զոր առաւօտուս Գշի (28 Օգոստ.) բերեալ զնա այն տեղացն դարձուցանելով, արգիլեցին զնաւն ի դուռս հարաւային կողմեան որ ասի Դուռ Աւազի։ Եւ Եղիազար վարդապետն ել եւ եկեալ ի Սուրբ Նիկողոս եւ ժողովեալ զեկեղեցեաց Զ–ից զաւագիրիցունսն և զիշխանսն, և յղեցին զայս բան առ Առաջնորդն թէ Փութանակի զայցես աստ զի տեսցուք զբանս. եւ նա պատասխանի տվեալ երթելոցն առ նա եթէ Զի՞նչ կոծ է ի վերայ իմ այդ եթէ հոգայցեմ զՀայս Պուղտանի։ Եւ զայս լըւեալ նստելոցն անդ ի ժողովն և խօսեցան բան ինչ։ Եւ ապա ել Վարդապետն եւ առ ընդ իւր քահանայս եւ իշխանս ոմանս զորս ինքն կամէր, եւ գնաց ի նաւն առ պատրիգն. և նա տեսեալ զսոսա՝ ի մեծ ահի լեալ, գուցէ և ոչ այլ ինչ բանս ունիցին. բայց Վարդապետն խօսեցաւ ընդ նա որպէս և կամէրն, վասն Հայոցն Պուղտանայ թէ Վասն է՞ր փակեալ լինին զեկեղեցիսն, և այլ բազում բանս. զոր և պատրիգն յանգիտութեան լեալ ի բանէն և առեալ գրեալ նօտոս և նամակ ձեռամբ իւրով առ տէրն Պուղտանայ եթէ Մեք յամին յայն, որ եղեալ է կռիւն ընդ Հայոցն, նա՛ ոչ է ի սոցանէ և ի մեզանէ, զի և մեք ոչ գոլով ի տեղն. յուխտաւորացն եկելոց եպիսկոպոսաց զայդ արարեալ են, զոր և ոչ մեք արժան տեսաք. վասն որոյ և այժմ խաղաղացաք ընդ սոցա՝ ուխտ և դաշինս արարեալ ընդ միմեանս. և զայս խնդրեմք ի քեզանէ, զի զայդ մի՛ արասցես. ողջ լիցիս ի Տէր։ Զայս թուղթ գրեալ պատրկին իւրով ձեռամբ առ պարոնն Պուղտանայ եւ